
ԼԻՄ ՄԵՆԱՍՏԱՆԻ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Լիմ կղզին Վանա լճի կղզիների մեջ ամենամեծն է: Ավանդությունը Լիմում վանքի հիմնադրումը կապում է սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան հետ, սակայն պատմական փաստերը բացակայում են: Կղզում գործել է խոշոր ու հռչակավոր մենաստան Սուրբ Գևորգ անվամբ, որն ունեցել է բազմաթիվ միաբաններ: Գտնվելով կղզու վրա, այսինքն՝ բնականորեն պաշտպանված վայրում, միաբանների համար հնարավորություն է ստեղծվել առանձնանալ աշխարհիկ կյանքից, հեռու գտնվել վտանգներից և խաղաղ պայմաններում նվիրվել վանական կյանքին ու մշակութաստեղծ գործին: Այդ շարունակական խոկման ու աշխատանքի արդյունքն են նաև վանքում ստեղծված ձեռագրերը:

Մտորն ներկայացնենք Լիմ կղզու մենաստանի գրչության կենտրոնն ու այնտեղ ստեղծված ձեռագրական ժառանգությունը:

Անապատի վաղ շրջանի գործունեության մասին տվյալներ չկան: Վկայություն ունենք, որ 884 թ. այստեղ գրչագիր է ընդօրինակվել, ինչը փաստում է XI դարում կղզում գործող վանքի և գրչության կենտրոնի մասին: Սա Լիմ անապատի գրչության կենտրոնից հայտնի առաջին ձեռագիրն է, որի մասին տեղեկություններ են պահպանվել դրանից ընդօրինակված գրչագրում: Ձեռագիրն Ավետարան է՝ գրված Գրիգոր Մաշկևորի ձեռքով 884 թվականին: XIV դարում գրիչ և ծաղկող Հակոբ Երզնկացու ընդօրինակած Ավետարանը (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 3711) որպես իր գաղափար օրինակի պարունակում է սույն ձեռագրում առկա հիշատակարանները. «Գրի ձեռամբ Գրիգորի վարդապետի Քաջբերունույ. ի թվին ԳՃԼԳ. (884), Տրէ ամսոյ Է. (7), ի սուրբ անապատին Լմայ, ի սկզիբն Աւետարանիս ի յանուն Սքանչելագործին», «մեղապարտ գրիչ Գրիգոր վարդապետ Քաջբերունույ, թվին ԳՃԼԳ. (884), Տրէ ամսոյ Բ. (20)»¹: Այսպիսով՝ Գրիգորի Ավետարանի գրչությունը սկսվել է Սքանչելագործ վանքում և ավարտվել Լիմ անապատում²: Այնուհետ՝ մինչ XIV դարը տեղեկություններ չունենք Լիմ անապատի գործունեության մասին³:

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 3711, թ. 10բ, 92ա:

² ՄՄ, ձեռ. 3711, թ. 6բ:

³ Ա. Մ ա թ և ո ս յ ա ն. Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ-ԺԵ դարերում. «Էջմիածին», 1966, - Զ, էջ 49-55:

1305 թ. Աղթամարի Չաքարիա Ա կաթողիկոսը (1296–1336) հիմնովին վերակառուցել է մենաստանի Սբ. Գևորգ եկեղեցին: Այս մասին ժամանակի պատմագիրը նշում է. «...զգեղեցիկ եւ լուսազգեաց գումբայթաձեւ գտաճար Սրբոյն Գէորգեայ զաւրավարին, եւ բազում սպասիք զարդարեաց եւ տուն աղաւթից շինեաց եւ տեղիս բնակութեան եւ դարապասս եւ բազում կրանաւորս կարգեաց եւ հաստատեաց...»⁴: Չաքարիա Ա Աղթամարցի կաթողիկոսը նս իր կալվածագրում գրում է, որ Լիմ մենաստանի վանահայր Հովհաննես եպիսկոպոս Արծրունու օգնությամբ վերանորոգել են Լիմի Սբ. Գևորգ եկեղեցին, բազմապատկել են վանքապատկան տարածքները տարբեր գյուղերում, անապատին ընծայել արտեր, ագարակներ, ջրաղաց⁵: Նա նաև նշում է, որ Լիմում միաբանություն կար դեռևս Ներսես Մեծի օրոք. « ... որպէս յառաջագոյն ի մեծն Ներսէս սրբազան հայրապետէն հաստատեալ կայր ... »: Սա փաստում է, որ, հիրավի, Լիմ կղզում IV դարում արդեն մենաստան կար:

XIV դարակեսին Լիմ անապատում ձեռագրեր է ընդօրինակել Խաչատուր արեղա գրիչը: Նրանից հայտնի է չորս ձեռագիր, որոնցից պահպանվել է միայն մեկը, մյուս երեքի՝ նկարագրությունները: 1301 թ. Խաչատուրն ընդօրինակում է Ավետարան. «Յամի ՉԾ. (1301), գրեցաւ սա յանապատիս ի Լիմն, ընդ հովանաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետի եւ Սուրբ Գէորգեայ Չաւրավարի եւ ի հայրապետութեան Հայոց աստուածահաճոյ եւ սրբասնունդ հայրապետին տէր Չաքարիայի եւ յառաջնորդութեան սուրբ ուխտիս պատուական եպիսկոպոսին տէր Յովան...»⁶: Որպէս ձեռագրի ստացող նշվում է Աստվածատուր քահանան: Խաչատուրի մյուս գրչագիրը (ՄՄ, ձեռ. 3767) գրվել է «ի թուականիս Հայոց, ՉԾԸ. (1309) եւ ի հայրապետութեան Չաքարիայի, ի կղզիս, որ կոչի Լիմն, ընդ հովանեաւ Սուրբ Գէորգեայ նորակազմ տաճարի եւ յառաջնորդութիւն սուրբ ուխտիս տէր Յովաննէսի»: Ավետարանի ստացողը տանուտեր Գեղուկն է, ով չունէր զավակ, և պատվիրելով այս գրչագիրը՝ այն ընծայում է Սուրբ Ամենափրկիչ եկեղե-

⁴ Թ ո վ մ ա Ա Ր ծ ր ու ն ի և Ա ն ա ն ու ն. Պատմություն տանն Արծրունյաց, աշխ. Գ. Տեր-Վարդանյանի.– Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 309:

⁵ Չաքարիա կաթողիկոսը 1305 թ. Լիմի տաճարի վերաշինության և իր կողմից արված նվիրատվությունների մասին թողել է կալվածագիր մի ձեռագիր Մաշտոցում: Թեև սույն Մաշտոցը չի պահպանվել, սակայն կալվածագրի երկու ընդօրինակություն է մեզ հասել՝ կատարված Օ. Բարադայանի և Ղ. Փիրդալեյանի կողմից (ՄՄ, ձեռ. 6333, էջ 100–101, ձեռ. 4515, էջ 62–64), ինչպես նաև դրա պարսկերեն տարբերակը: Կալվածագրի հայերեն բնագիրը տե՛ս Ա. Մ ա թ և ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 54–55, Հ. Փ ա փ ա զ յ ա ն. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան, 1968, էջ 137–139, պարսկերեն բնագիրը թարգմանել և հրատարակել է Հ. Փափազյանը:

⁶ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է. տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, կազմ. Ե. Լալայան, էջ 139–140, ձեռ. 76:

ցուն⁷: 1333 թ. արդեն եպիսկոպոս Խաչատուր գրիչը ևս մեկ Ավետարան է ընդօրինակում Ահարոն կրոնավորի խնդրանքով⁸: Խաչատուրին վերջին անգամ հանդիպում ենք 1336 թ. Հովհաննես կրոնավորի համար Ավետարան օրինակելիմ⁹: Հիշատակարանում դառնացած գրիչը նշում է, որ թշնամու կողմից ավիրվեց Արձեշ քաղաքը:

Մեզ հասած 1301 թ. Ավետարանի նկարագրության համաձայն և ուսումնասիրելով 1309 թ. ձեռագիրը (ՄՄ, ձեռ. 3767)՝ պարզվում է, որ Խաչատուրի ավետարանները նկարագարողված են լուսանցագարդերով և զարդագրերով՝ հիմնականում կարմիր գույնով: Տերունական նկարներ մեզ չեն հասել, ուստի՝ չենք կարող ասել՝ ստեղծման ժամանակ այս ձեռագրերն ունեցել են տերունական մանրանկարներ, թե՞ ոչ: Ամեն դեպքում, Խաչատուրն իր հիշատակարաններում ոչ մի ծաղկողի անուն չի նշում, և կարող ենք ենթադրել, որ նա ինքն է իր գրչագրերը նկարագարել:

Լիմ անապատի հաջորդ գրիչը Աբրահամն է: 1306 թ. նա ընդօրինակում է Ավետարան Խաչատուր քահանայի խնդրանքով¹⁰: Գրչի հաջորդ ձեռագիրը Մաշտոց է՝ գրված 1310 թ.¹¹:

Աբրահամ գրչից պահպանված միակ ձեռագիրը 1315 թ. գրված Աստվածաշունչն է (ՄՄ, ձեռ. 192), որի ստացողը Թադեոս կրոնավորն է: Հիշատակարանում նշվում են նաև հարակից տեղեկություններ. «Արդ, յայսմ դառն եւ ի դժնու ժամանակի, յորում խաւար անլոյս եւ մեզ անմխիթար տարածեալ մածեալ ունէր զամենայն երես երկրի, եւ Թադեոս կրանաւոր եւ եղկելի անձն, գրել տուի զՄարգարէս եւ զԱռաքեալս ի յարդար վաստակոց իմոց... Գրեցաւ եւ կատարեցաւ Մարգարէս եւ Առաքեալս անարժան ձեռամբ սուտանուն Աբրահամու, ի թվականիս ԶԿԴ. (1315): Գրեցաւ ի կղզիս, որ կոչի Լիմն, ընդ հովան[ե]լաւ Սուրբ Գէոր[գ]եայ աջիս՝ նորակազմ տաճարիս, ի հայրապետութիւն տէր Զաքարի եւ յառաջնորդութիւն տէրոյս տէր Յով[հաննիսի]»¹²:

Խաչատուրի և Աբրահամի ձեռագրերում նշված են Լիմ անապատի սրբատեղիները՝ Սուրբ Աստուածածին, Սուրբ Կարապետ, Սուրբ Գ-

⁷ ՄՄ, ձեռ. 3767, թ. 274բ:

⁸ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է. տե՛ս Ղ. Փիրղալեմյան. Նշխարք պատմության հայոց. տե՛ս ՄՄ, ձեռ. 6273, էջ 143, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 260:

⁹ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է. տե՛ս Յուզակ ձեռագրաց Մշո Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից, կազմ.՝ Սահակ Սուրատյան, Ն. Մարտիրոսյան, Երուսաղեմ, 1967, հ. 11, էջ 104:

¹⁰ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է: Ղ. Փիրղալեմյան. նշվ. աշխ., տե՛ս ՄՄ, ձեռ. 6273, էջ 108, նաև ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 41:

¹¹ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է: Ղ. Փիրղալեմյան. նշվ. աշխ. տե՛ս ՄՄ, ձեռ. 6273, էջ 116:

¹² ՄՄ, ձեռ. 192, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 113–114:

ևորգ, որոնցից վերջինը միանշանակ եկեղեցու անունն է: Հիշված են նաև ժամանակի վանահայրը՝ Հովհաննես եպիսկոպոսը, Աղթամարի Չաքարիա կաթողիկոսը և նրա հայրենանպաստ գործունեությունը: Մերահամ գրիչը Աղթամարի Չաքարիա հայրապետին նմանեցնում է ս. Գրիգոր Լուսավորչին, «...որ է ամեննին բարի, աննենգ եւ անցատումն, նմանեալ աթոռակալին իւրոյ սուրբ Գրիգոր խոնարհութեամբն եւ համբերութեամբն, որ եւ նա ի մէջ թունաւոր օձիցն համբերեալ հնգետասան ամ, նույնպէս եւ սա ի դառն եւ ի վշտաբեր ժամանակիս, ի մէջ անօրինաց եւ արիւնարբու գազանաց ազգին նետողաց»¹³: Նշենք նաև, որ թե՛ Խաչատուր, թե՛ Մերահամ գրիչների ձեռագրերում Լիմի Մր. Գևորգ եկեղեցին կոչվում է «նորակազմ տաճար»՝ ակնարկելով Չաքարիա Ա կաթողիկոսի կողմից եկեղեցու վերաշինման իրողությունը:

1317 թ. Թումա գրիչն ընդօրինակել է Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց» երկը՝ տիկին Խրիկի պատվերով¹⁴: 1394 թ. Մանուէլ կրոնավորն ընդօրինակում է Գանձարան, որը Լիմ անապատում XIV դ. գրված և մեզ հասած վերջին ձեռագիրն է (Վենետիկ, ձեռ. 382): Մանուէլ գրիչը ուշագրավ տեղեկություն է հայտնում նաև այն մասին, որ Լենկ Թեմուրի վայրագ կոտորածներից իրենք զերծ մնացին Լիմ կղզում իրենց վարդապետի՝ Սարգսի շնորհիվ. «Արդ, գրեցաւ սա ի Լիմն կղզիս, ընդ հովանեաւ Սրբոյն Գեորգեայ հոյակապ եւ հոշակաւոր, բարձրաշէն եւ գեղեցկաշէն տաճարիս, յամի ութեւհարերերորդի, քառասներորդի եւ երրորդի (1394), յորում ամի աստուածասաստ բարկութիւնն շարժեցաւ ի վերայ երկրի, արիւնարբու գաւրքն թաթարին, որոյ անուն գլխաւորին Լանկ Թեմուր կոչիւր, այր անողորմ և չարաբարք, դառն եւ դրժնեայ մանաւանդ ընդդէմ քրիստոնէական ազգիս, յորոյ սաստիցն զերծեալ մեր ապրեցաք առ ոտս երջանիկ վարժապետին Սարգսի, ի Լըման կղզիս: Եւ արդ, գրեցաւ սա ի խնդրոյ բարեբարոյ և շնորհալի քահանայի միոյ՝ Յոհանէս կոչեցեալ...»¹⁵:

XV դարից մեզ հասած առաջին ձեռագիրը 1421 թ. Հովհաննես գրչի ձեռքով գրված Ավետարանն է (ՄՄ, ձեռ. 4624): Նա ձեռագրում հիշատակում է նաև իր ուսուցչի, միաբան եղբայրների և մերձավորների անունները. «Այլեւ զհոգևոր ծնաւորսն մեր եւ զուսուցիչսն՝ ԳԴաւիթ կրաւնաւորըն... այլեւ զառաջնորդ սուրբ ուխտիս զՅովանէս խաչընդուս կրոնաւորն, եւ զմիաբանքս՝ զտէր Յովհանէս եպիսկոպոս, եւ զՍարգիս փիլիսոփայն, եւ զՄկրտիչ կրաւնաւորն, եւ զՍտեփաննոս եկեղեցւանն, եւ զԹովմա կրթոնաւորն, եւ զհարազատն իւր զՅակոբ կրաւնա-

¹³ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 67–68:

¹⁴ Ձեռագիրը այժմ պահվում է Ժնևի Մր. Հակոբ հայկական եկեղեցում:

¹⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Ե, կազմ.՝ Ս. Ինձիճյան, Վենետիկ–Ս. Ղազար, 1995, էջ 295–308:

ւոր, եւ զհայրն իւրեանց զՍտեփաննոս: Այլեւ զՎարդան փիլիսոփայ, հանդերձ հարագատիւն իւր Թորոսիւ, եւ զՅովաննէս, եւ զերկու հարագատսն իւր զՅակոբ եւ զՄարտիրոսն՝ զքաջսն եւ զարիսն ի գործս հոգևորս եւ մարմնաւորս, եւ զծեր հայրն նոցա զՍտեփաննոս, եւ զԿարապետ արեղայն, եւ զՅովանէս Արճիշեցի, եւ զամենայն գործաւորք դրան սուրբ եկեղեցոյս՝ զսնտես, զմաճկալ, զհովիւ եւ զամենեսեան՝ զմեծ եւ զփոքր...»¹⁶: Թղթի կոկողն է Վարդան կրոնավորը, իսկ կազմողը՝ Գրիգորը: Գրիչը դառնությամբ գրում է, որ իր եղբայր Վարդան կրոնավորը ձեռագրի թուղթը կոկողուց ութ օր հետո հիվանդացավ եւ մահացավ, ուստի՝ ինքը սույն ձեռագիրը թողեց Լիմ անապատում՝ ի հիշատակ իր եղբոր¹⁷:

Հաջորդ ձեռագիրը, որը ևս Ավետարան է (ՄՄ, ձեռ. 4979), սկսում է ընդօրինակել Հովաննէս վարդապետը 1439 թ. (թերևս, նախորդ Հովաննէս գրիչը), սակայն աշխատանքը դեռ չավարտած՝ մահանում է: Գործը շարունակում է Հովսեփ միայնակյացը, ով նաև ծաղկողն ու կազմողն է. «...սուրբ վարդապետն Յովաննէս եւ ձեռն ի գործ արկեալ գրեաց զսուրբ Աւետարանս, ի յիշատակ բարի հոգւոյ եւ ծնաւդաց իւրոց... եւ ի կատարումն աւետարանիս ոչ ժամանեաց, այլ փոխեցաւ տարածամ մահուամբ ի Քրիստոս: Վասն որոյ աստուածասէր եւ բարեպաշտ միայնակեացն Յովսեփ եռափափագ սրտիւ... ի քիրտն աշխատեաց իւրոց կատարել ետ զսուրբ Աւետարանս՝ գրելով եւ ծաղկելով եւ կազմելով...»¹⁸: Ձեռագրում որորշակի պակաս հատվածներ լրացրել է Մկրտիչ վարդապետը, սակայն նա ևս տարածամ մահվան պատճառով հեռանում է կյանքից. «...գտիեզերալոյս եւ զաստուածաբան, քաջ եւ երջանիկ վարդապետն Մկրտիչ, որ զպակասութիւն սուրբ Աւետարանիս գրեաց, եւ ի կատարումն յիշատակարանիս ոչ ժամանեաց, այլ տարածամ մահուամբ փոխեցաւ առ անծկալին իւր Քրիստոս...»¹⁹:

1454 թ. Լիմ անապատում Ավետարան է ընդօրինակում Հերպետ (Հայրապետ) գրիչը (ՄՄ, ձեռ. 6509)՝ «...այլ ըստ բազում հայցման եւ պատկառանաց քրիստոսասէր եւ բարի Մարտիրոսին»²⁰:

Իգնատիոս գրիչը Քաջբերունիքի Խառաբաստավանքում (Սուհարավանք) 1454 թ. սկսում է մի ձեռագրի ընդօրինակություն՝ «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց», սակայն երկրում տիրող ծանր իրավիճակը, կոտորածները ստիպում են Քաջբերունիքի բնակիչներին, որոնց հետ

¹⁶ ՄՄ, ձեռ. 4624, թ. 288բ-9ա:

¹⁷ Նույն տեղում, թ. 136բ:

¹⁸ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 499-500:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, կազմ.՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 43:

էր նաև գրիչը, առժամանակ փախչել ու ապաստանել այլ վայրերում՝ «...եւ ոմանք ամրացան յանառիկ կղզիս Լիմն կոչեցեալ, եւ շատք ցրուեցան յերկիր Ամկու...»²¹: Լիմում Իգնատիոսը ավարտին է հասցնում իր գրչագիրը²²:

Արձեշ գավառում Քաջբերունիքի բարունապետ Վարդան վարդապետի խնդրանքով գրիչ Հովհաննես Մանգասարենցը սկսում է Ավետարանի գրչագրություն (ՄՄ, ձեռ. 6570): Հովհաննեսը որպես գրչության հմուտ վարպետ՝ բավական հայտնի էր Վասպուրականում: Նրա գրչագրերը սովորաբար ծաղկում էր Մինաս Ծաղկողը: Այս ձեռագիրը Հովհաննես Մանգասարենցը սկսում է Արձեշում և ավարտում 1454 թ. Լիմում: Այստեղ էր նաև Մինաս Ծաղկողը, ով այն նկարագարում է: Կարծում ենք, որ Հովհաննես Մանգասարենցի՝ Լիմ կղզի տեղափոխվելը պայմանավորված էր երկրում տիրող խառնակ դրությամբ, այսինքն՝ պատճառը նույն էր, ինչ Իգնատիոս գրչինը. «...աւարտեցի ի մեծ թուականութեանս Հայոց ՋԳ. (1454) ամին, յառաջնորդութիւն երկրիս Քաջբերունոյ մեծ բարունապետի և քաջ վարժապետի Կարապետ վարդապետի, և ի հայրապետութեան մեծ Աթոռոյն Սուրբ Էջմիածնի տէր Գրիգորի, և ի դանութիւն արեւարբու բռնաւորին Ջհանշահի... գրեցի սուրբ Աւետարանս ի քաղաքիս Արձեշ կոչեցեալ և ի կղզիս, որ կոչի Լիմն»²³: Այս Ավետարանը, ի տարբերություն Լիմ մենաստանի գրիչների կողմից գրված ու նկարագարված ձեռագրերի, բավական հարուստ է մանրանկարներով:

Մեզ է հասել նաև մի Հայամավուրք՝ գրված 1452–1457 թթ. Սուխարավանքում (Խառաբաստավանք), Արգելանում, ապա՝ Լիմ անապատում (ՄՄ, ձեռ. 4472): Ձեռագիրն ընդօրինակվել է ոչ միայն երեք տարբեր վայրերում, այլև՝ գրչափոխությամբ: Առաջին գրիչը Հովհաննես քահանան է. «... սակաւ աշխատողիս Յովհաննէս քահանայի, որ վասն սիրոյ եղբորս մեր՝ մահդասի Ստեփաննոսին գրեցի զայս Գ. (3) սխրալի ճառս»: Նա նշում է, որ Հասան անունով մահմեդական բռնակալն անմեղ քրիստոնյաներին գերեց, իսկ ձեռագրի ստացող Ստեփաննոս մահդասին իր վաստակով ազատեց նրանց. «Եւ զի զամենայն գործս եւ զվաստակա ձեռաց իւրոց բաշխեաց առաջի մեր ի գինս գերեացն, զորս ազատեաց յանօրինաց, եւ զայլն ի գինս գրոց պատուականաց եւ յայլ սպասս եկեղեցեաց»²⁴: Հաջորդ գրիչը Ղազար կրոնավորն է: Նա հիշում է նաև Կարապետ սարկավագին՝ թուղթ կոկողին, և ստացողին՝ մահդասի Ստեփանոսին: Հիշատակարանում գրելով մատյանի ստեղծման

²¹ Նույն տեղում, էջ 39:

²² Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է. տե՛ս Ղ. Փի Ր Պ ա լ է մ յ ա ն. Նոտարք Հայոց, Կ. Պոլիս, 1888, էջ 174–176:

²³ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 40–41:

²⁴ ՄՄ, ձեռ. 4472, թ. 667ա:

դեգերումներով լի պատմությունը՝ Ղազարը կղզին կոչում է «յանառիկ ամուրն Լիմն», որ նշանակում է անառիկ ամրոց. «Եւ արդ, գրեցաւ սա յանառիկ ամուրն Լիմն, ընդ հովանեաւ Սրբոյն Գէորգեա, և այլ սրբութեացս, որ աստ կան հաւաքեալ: Եւ այլն գրեցաւ յերկրին Քաջբերունի, ի վանս Սուխատայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և ամենայն սրբութեանցն: Եւ այլն գրեցաւ ի վանս Արգելան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Կարապետի և Սուրբ Յարութեանս և Սուրբ Ստեփաննոսիս տէր Յուսկան որդւոյ սուրբ գերեզմանիս»²⁵: Այս ձեռագրի ծաղկողը ևս Մինասն է, ով այն ճոխացրել է հայսմավուրքյան սրբերի լուսանցային մանրանկարներով:

Լիմից մեզ հայտնի հաջորդ ձեռագիրը Շարակնոց է (ՄՄ, ձեռ. 6043)՝ գրված 1527 թ.: Գրիչը նաև ծաղկողն է, բայց հիշատակարանում չի նշում իր անունը՝ այս ձեռագրի պարագային չկարևորելով այն, այլ արձանագրում է ձեռագրի ստեղծման տխուր պատճառը՝ Մեսրոպ երիտասարդ արեղայի խեղդվելը ծովում. «Յայսմ ամի անկաւ Մեսրոպի փոքր արեղայն ի ծովս եւ խեղդամահ եղեւ... Եւ շատ որոնեցաք զմարմին նորայ յե[զերբ] ծովուն եւ ոչ գտաք, որով լինէր սա[կաւ] ինչ սփոփանք սրտից մերոց: Արդ [ի յայսմ] ամի աւարտեցաւ Շարակնոցս ի Լիմն կղզիս յերկիրս Ամկոյ ձեռամբ անյ[իշելի] եւ անանուն գրչի, որ մեծաւ տառ[ապան]աւք գրեցի եւ ծաղկեցի ոսկով»²⁶: Գրիչը նաև նշում է, որ Մեսրոպ արեղան երաժշտական շնորհ ուներ, ուստի՝ պատահական չենք համարում ձեռագրի բովանդակության ընտրությունը. «Ձի էր ինձ ըստ հոգւոյ որդի եւ աշակերտ, ի յուսմունս երաժշտականս անցեալ անոյշ ձայնիս եւ պատշաճ եղանակաւ»²⁷:

Հաջորդ ձեռագիրը Մաշտոց է՝ գրված 1530 թ. (Երուսաղեմ, ձեռ. 289): Գրիչը Մկրտիչ արեղան է, որ հիշատակարանում նշում է՝ «Մկրտիչ գրծողս յիշեցէք ի Քրիստոս»²⁸: Մեզ են հասել երկու Մաշտոց՝ 1530 և 1533 թթ. գրված, թերևս նաև ծաղկված Հովսեփ Աղթամարցու ձեռքով (ՄՄ, ձեռ. 945, Երուսաղեմ, ձեռ. 302): Առաջինի ստացողն է Հովանես միայնակյացը, ով այն ընծայում է Աղթամարի Սուրբ Խաչին²⁹: Մյուսի ստացողն է Պարսամը, ով այն նվիրում է «ի նոյն գեաւդաքաղաքն յՈւրանց ի դուռն Ս. Ստեփաննոս Նախավկային եւ Ս. Նշանին...»³⁰:

²⁵ Նույն տեղում, թ. 632ա:

²⁶ ՄՄ, ձեռ. 6043, թ. 227բ-ճա:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հ. Բ, կազմ.՝ Ն. Պողարյան, Երուսաղեմ, 1967, ձեռ. 289, էջ 117: Ձեռագրի գրության վայրը և թվականը նշված են կրնակին փակցված թղթին:

²⁹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Գ, կազմ.՝ Օ. Եզանյան, Երևան, 2007, էջ 1376:

³⁰ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հ. Բ, ձեռ. 302, էջ 146:

1534 թ. Հովսեփ գրիչն ընդօրինակում է Ճաշոց և ձեռագրի ընդարձակ հիշատակարում նկարագրում այն անմխիթար իրավիճակը, որում գտնվում էր երկիրը Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև ընթացող պատերազմի հետևանքով. հազարավոր մարդիկ են կոտորվում, քաղաքներն այրվում են, վանքերը թալանվում ու կողոպտվում: Ըստ այս վկայության՝ ավիրվում է նաև Լիւնը, սպանվում են մի քանի միաբաններ, մյուսներն ապաստանում են Աղթամարում. «... մտին եւ ի Լիւն կղզին, թալանեցին զինչս եւ զսպասք Սուրբ Գեորգ զօրավարին, եւ արարին շատ աւերք եւ դառնութիւն... եւ մեք՝ ահաբէկ եւ տարեկոսս կանք ի յԱղթամար...»³¹:

Վկայություն կա, որ 1538 թ. Վանա բերդին տիրացած Գոգչա սուլթանը զորքով մտնում է Լիւն կղզի, ավիրում, կոտորում միաբաններին և այրում կամ ծովը նետում ձեռագրերը, որոնց միայն մի փոքր մասն է գտնվել ու փրկվել³²: Այնուհանդերձ, վանքի միաբանները կարողանում են վերականգնել վանական կյանքը:

1553 թ. ուն Աղաջանի խնդրանքով Մաշտոց (ՄՄ, ձեռ. 5976) է ընդօրինակել Կարապետ գրիչը: Ժամանակագրորեն Լիւնից հայտնի հաջորդ ձեռագիրը ևս Մաշտոց է՝ գրված 1568 թ., Թորոս գրչի ձեռքով (ՄՄ, ձեռ. 3353): Հիշատակարանը կարևորվում է նրանով, որ նշված են սուրբ ուխտի առաջնորդի և այլ միաբանների անունները. «Դարձեալ աղաչեմ զամենեսեան յիշել ի Քրիստոս զտիեզերալոյս քաջերջանիկ զառաջնորդ սուրբ ուխտիս՝ Չաքարիայ արքեպիսկոպոս, որ բազում աշխատեցաւ զսակաւ զիրս ուսուցանել, եւ Աստուած ողորմի ասացէք նմա...»³³:

Մեզ են հասել նաև մենաստանի առաջնորդի՝ Չաքարիա եպիսկոպոսի ձեռագրերից, որոնք նա և՛ գրել է, և՛ ծաղկել: Մրանցից մեկը 1549 թ. գրված Ավետարանն է³⁴: 1561 թ. Չաքարիա եպիսկոպոսը Հայաստանում է ընդօրինակում և ծաղկում Թորոս վարդապետի պատվերով³⁵: Գրիչից մեզ հասած մյուս ձեռագիրը Մաշտոց է՝ գրված 1571 թ. (Վենետիկ, ձեռ. 1891), որի ստացողն է Հովսեփ եպիսկոպոսը: Ձեռագրի ընդօրինակումը Չաքարիա եպիսկոպոսը սկսել է Լիւնում, ավարտել Արծվաբերի Ս. Աստվածածին վանքում, ծաղկել և կազմել այն, ապա՝

³¹ Ղ. Փ ի ը ղ ա լ է մ յ ա ն. Նշխարք պատմության հայոց. տե՛ս ՄՄ, ձեռ. 6332, էջ 240: Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է:

³² Սույն հիշատակությունը բովանդակող Մաշտոց մատյանը կորած է, ընդօրինակությունը պահպանել է Օ. Բարադամյանը. տե՛ս ՄՄ, ձեռ. 6333, էջ 101–102:

³³ ՄՄ, ձեռ. 3353, թ. 165աբ:

³⁴ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է. տե՛ս Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, ձեռ. 272, էջ 651–654:

³⁵ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է. տե՛ս Ղ. Փ ի ը ղ ա լ է մ յ ա ն. Նշխարք պատմության հայոց. տե՛ս ՄՄ, ձեռ. 6332, էջ 270–272:

հանձնել Հովսեփ եպիսկոպոսին, ով էլ այն ընծայել է Խառակոնիսի Ս. Թեոդորոս եկեղեցուն³⁶: Չաքարիա առաջնորդի հաջորդ գրչագիրը 1576 թ. Շարակնոցն է (ՄՄ, ձեռ. 1613), որի ստացողն է Մելիքսեթ քահանան: Չաքարիա եպիսկոպոսը նշում է իր ուսուցիչներին, որոնցից մեկը Աղթամարի կաթողիկոսն է. «Չաքարիա մեղապարտ գծողիս եւ նրկա[րո]ղիս Աստուած ողորմի ասացէք: Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զուսուցիչքն՝ իմ զշնորհագարդ եւ պատուական հայրապետն զԳրիգորիս Աղթամարցին եւ զՅովսեփ վարդապետն...»³⁷: Չաքարիա եպիսկոպոս Գնունյանցը նաև հեղինակել է տաղեր, սակայն դրանց ինքնագրերը մեզ չեն հասել, պահպանվել են հետագայի ընդօրինակություններով³⁸:

Դավիթ արեղան մեզ հայտնի հաջորդ գրիչն է: 1575 թ. նա ընդօրինակում է Սաղմոսարան «ի խնդրոյ Յոհաննէս քահանայի»³⁹: 1585 թ. Դավիթ գրիչը Մաշտոց է ընդօրինակում, իսկ 1588 թ.՝ Ավետարան⁴⁰: Նրա գրչի հաջորդ ձեռագիրը 1592 թ. Ավետարանն է (ՄՄ, ձեռ. 5011): Թե՛ այս, թե՛ նախորդ ձեռագրերի հիշատակարաններում գրիչը նշում է ինչպես իր ուսուցիչն՝ Չաքարիա արքեպիսկոպոսին, այնպես էլ իր հոգևոր եղբայրներին. «...զուսուցիչն իմ՝ զքաջ քարտաւղարն Չաքարիայ արքեպիսկոպոսն, և ի ժամ սոսկալի պատարագին յի բերանով Աստուած ողորմի ասացէք: Եւ զհոգևոր եղբարքս զտէր Յոհաննէս արհեպիսկոպոսն, զտէր Գեորգն, զտէր Սարգիսն, զտէր Մելքեսէթն, զտէր Ստեփանոսն, և զտէր Պետրոսն, զտէր Պաւղոսն Տէր Աստուած դասակից և պսակակից Սուրբ Ղևոնդեանցն արասցէ. ամէն»⁴¹: 1593 թ. Դավիթն ընդօրինակում է Գանձարան (ՄՄ, ձեռ. 5346): Ձեռագրի ծաղկողը Սարգիս Մազմանն է, ստացողը՝ «իմաստուն եւ հանձարեղ աստուածասէր խաւօա Պուտախը»⁴²:

XVI դարի մեզ հայտնի վերջին գրիչը Կարապետ եպիսկոպոսն է, որ 1582 թ. ընդօրինակել է Մաշտոց՝ հիշատակարանում նշելով ուխտի առաջնորդին և միաբաններից մի քանիսին. «... յառաջնորդութիւն Յոհաննէս արհիեպիսկոպոսին, տէր Դաւիթ վարդապետին, Գրիգոր հեր-

³⁶ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Գ, կազմ.՝ Բ. Սարգիսյան, Գ. Սարգսյան, Վենետիկ – Ս. Ղազար, 1966, էջ 383–390:

³⁷ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ե, կազմ.՝ Օ. Եգանյան, Երևան, 2009, ձեռ. 1474, էջ 648–649:

³⁸ Ն. Ա կ ի ն յ ա ն. Չաքարիա եպիսկոպոս Գնունյանց և յուր տաղերը, Վիեննա, 1910:

³⁹ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է: Ղ. Փ ի Ր ղ ա լ է մ յ ա ն. Նշխարք պատմության հայոց. տե՛ս ՄՄ, ձեռ. 6332, էջ 297–298:

⁴⁰ Ձեռագրերը Մեծ եղեռնի ժամանակ կորել են. տե՛ս նույն տեղում, էջ 314–315, 319:

⁴¹ ՄՄ, ձեռ. 5011, թ. 305ա:

⁴² ՄՄ, ձեռ. 5346, թ. 452աբ:

պետին, տէր Սարգսին, տէր Հերապետին, տէր Գրիգորին»⁴³: Կարծում ենք, որ այստեղ նշված Դավիթ վարդապետը Դավիթ գրիչն է:

XVII դարում Հայաստանում սկսվում է անապատական կյանքի վերագարթոնք՝ Սարգիս վարդապետի (Սաղմոսավանքից) և Կիրակոսի քահանայի (Տրապիզոնից) ջանքերով: Նրանք 1611–1613 թթ. Սյունիքում՝ Տաթևի վանքից քիչ հեռու՝ Հալիձոր գյուղի դիմաց, հիմնում են մենաստան՝ Հարանց անապատը: Ներսես վարդապետ Սոկացին՝ Բեղլու մականվամբ, միանում է Հարանց անապատի սրբակենցաղ հայրերին: Հինգ տարի այստեղ կենցաղավարելուց հետո՝ 1621 թ., նա յոթ միաբանների հետ ուղևորվում է Լիմ և այնտեղ վերականգնում անապատական կյանքը: Այս մասին պատմիչ Առաքել Դավրիժեցին գրում է. «Աստ վարժեալ ուսաւ Սոկացի Ներսէս վարդապետն զվարս կրօնաւորական, և էլեալ գնաց ի գաւառն Վասպուրականի, և եմուտ ի կղզին Լմայ ի մէջ ծովուն, և անդ ժողովեցան առ նա բազմութիւնք եղբարց, և եղև անապատ հաստատուն ամենայն կարգօք և կրօնիւք միակեցութեան վարուց»⁴⁴: Անշուշտ, բանաստեղծ և տաղերգու Ներսես Սոկացին և՛ ընդօրինակել է զանազան գրչագրեր, և՛ ունեցել իր ստեղծագործությունների ինքնագրերը, սակայն դրանք չեն պահպանվել⁴⁵:

Լիմում XVII դարի առաջին ձեռագրերից է Հովհաննես Սոկացու գրած և ծաղկած Ժողովածուն (ՄՄ, ձեռ. 2079), որը գրել է Շատիկ անապատի միաբան Հովհաննես կրոնավորի խնդրանքով: Հովհաննես Սոկացին մեծ բերկրանքով է հիշատակում Ներսես Սոկացու՝ Լիմ անապատ գալու իրողությունը և նշում, որ ինքը ևս այն անձանցից էր, որոնք միացան նրան. «... զի Սոկաց Ներսէս վարդապետն ի վերին Տաթևոյ անապատն կացեր էր Դ. (4) տարի, եկաւ ի Վանա երկիրս, ի Լմայ կղզիս անապատ հաստատեաց ի թվին ՌՀԱ. (1622) եւ մեք այլ նորա միաբանեալ բնակեցաք աստ...»⁴⁶: Ժողովածուն աչքի է ընկնում հարուստ և արժեքավոր բովանդակությամբ. այն պարունակում է Ներսես Շնորհալու, Առաքել Սյունեցու և այլոց տաղերն ու այլ չափածո երկեր, դավանական նյութեր, հատվածներ պատմագրքերից, Հովասափի ու Բարադամի պատմությունը, նաև Ներսես Սոկացու տաղերը:

1624 թ. Լիմի միաբան Պետրոս եպիսկոպոսը ստացել է Մաշտոց (ՄՄ, ձեռ. 5772), որի գրչության վայրն ու գրիչը նշված չեն: Հիշատակարանից հայտնի է միայն, որ այն գրվել է մեկենասությամբ Գուար

⁴³ Ղ. Փի Ր Պ ա լ է մ յ ա ն. Նշխարք պատմության հայոց, տե՛ս ՄՄ, ձեռ. 6332, էջ 310–311: Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է:

⁴⁴ Առաքել Դավրիժեցի. Գիրք Պատմությանց, աշխ. Լ. Խանալարյանի, Երևան, 1990, էջ 218:

⁴⁵ Ա. Դ ո լ ո յ ա ն ն. Ներսես Սոկացի, Բանաստեղծություններ, Երևան, 1975:

⁴⁶ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. 2, խմբ.՝ Գ. Տեր-Վարդանյան, Երևան, 2012, էջ 1393–1394:

տնտեսի և ի բարի հիշատակ իր ու իր ընտանիքի նվիրել Լիմ անապատին՝ հանձնելով Պետրոս եպիսկոպոսի ձեռքը. «Եւ ստացաւ զՄաշտոցս ի դուռ Ս. Գէորգեայ անայպատին, յիշեայտակ հոգոյ իւրոյ: Թվայկանին ՌՀԳ. (1624)», իսկ ստացող Պետրոս եպիսկոպոսը գրում է. «ԽԹ. (49) տարի առաջնորդութիւն արի Ս. Գէորգեայ, շատ նեղութիւն և չարչարանք քաշեցի. ախ, Ռ (1000) ախ ի յայլագագ ձեռնէ: Ի դառ ժամանակիս ձեռնեայդիք, Մաշտոցիս տրւի գրել, ձեռ թուլն էր և աչ կոր էր, ոչ էլ գնչէն (չի շարունակված)»⁴⁷: Գրչի հիշատակարանի բացակայությունը և Պետրոս եպիսկոպոսի հիշատակարանը թույլ են տալիս ենթադրել, որ մեկենասները դիմել են Պետրոս եպիսկոպոսին՝ մենաստանին իրենցից որևէ հիշատակ թողնելու խնդրով, իսկ վերջինս առաջարկել է Լիմի միաբաններից մեկին ընդօրինակել սույն ձեռագիրը: Ստացողի հիշատակարանի թիվն էլ՝ 1624, հուշում է, որ ձեռագրի գրչությունը պետք է ավարտված լինի նույն թվականին:

Ներսես Մոկացին շարունակում է Լիմ անապատի վանահայրությունը մինչև իր մահը՝ 1625 թվականը, այնուհետև նրան փոխարինում է Ստեփանոս Շատախեցին: Վերջինիս օրոք Լիմի միաբանությունն ավելի բազմամարդ է դառնում և նրանցից ոմանք գնում են Կտուց՝ այնտեղ ևս վանական կարգը վերականգնելու համար: Ստեփանոս Շատախեցու օրոք բավականին մեծ թվով ձեռագրեր են գրվել անապատում, նաև այլ գրչության կենտրոններից ստացվել՝ հոգևոր ու մշակութային կյանքի համար: Վանահայր Ստեփանոսը ոչ միայն միաբաններին էր հանձնարարում ձեռագրեր ընդօրինակել, այլ ինքը ևս մասնակից էր գրչագրերի ստեղծմանը: Ցավոք, նրա և այլ միաբանների կողմից գրված ու ծաղկված մատյանների զգալի մասը մեզ չի հասել: Ստորև ներկայացնենք մեզ հայտնիները:

Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը պահվում է Ժողովածու (Վենետիկ, ձեռ. 171), որի գրչությունը 1620 թ. սկսվել է Բաղեշի Ամիրդոլու վանքում, ապա շարունակվել և ավարտվել Լիմում՝ 1622 թ.: Գրիչը Ստեփանոս Շատախեցին է, ում խնդրանքով ձեռագիրը ծաղկել է Սահակ Բաղիշեցին⁴⁸: Այս ձեռագրի հիշատակարանում Ստեփանոս Շատախեցին անդրադառնում է Ներսես Մոկացու Լիմ գալուն: 1647 թ. նա Լիմում Ավետարան է ընդօրինակում (ՄՄ, ձեռ. 332) Սարգիս բարեպաշտ մարդու խնդրանքով. «Արդ, աւարտեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ի Ռ. եւ ՂԶ. (1647), վերակացութեամբ նուաստ և անարժան Ստեփանոս անուամբ... ի Լիմա Ս. Գէորգ անա-

⁴⁷ ՄՄ, ձեռ. 5772, թ. 186բ, 34բ:

⁴⁸ Մայր Յուզակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. է, կազմ.՝ Ս. Ճեմճեմյան, Վենետիկ – Ս. Ղազար, 1996, էջ 296–316:

պատի...»⁴⁹: Ստեփանոս վարդապետը նաև լրացրել ու կազմել է ձեռագրեր, որոնցից մեզ հայտնի է XV դարում գրված Սարգիս Շնորհալու «Մեկնություն կաթողիկեից» աշխատությունը, որը նա վերստին կազմել է Լիմում (ՄՄ, ձեռ. 4795)⁵⁰:

1648 թ. Մարտիրոս գրիչը սկսում է ընդօրինակել Հայսմավուրք՝ (ՄՄ, ձեռ. 4693)՝ Ստեփանոս վարդապետի հանձնարարությամբ և այն ավարտին հասցնում: Գրչագիրը կազմվում է «...ձեռամբ Մեսրոպ վարդապետին եւ իմ աշակերտեալ նմա Թումա երիցու և անապատիս հայր կոչեցեալ Թաթուլ միակեցին»⁵¹: Ձեռագիրը բովանդակում է տաղեր, քարոզներ, իրատներ, տոմարական նյութեր և այլն:

1631 թ. Մովսես քահանան գրում է Ժողովածու (Երուսաղեմ, ձեռ. 1652): Այս ձեռագրի մի մասը՝ Կանոնականը, գրվել է Լիմում, մյուս մասը՝ Արարածոց մեկնությունը՝ Վարագում: «Զմեկնիչն ի Վարագ գրեցի եւ զայլ կանոնականքն ի Լիմ անապատ»⁵²: Ձեռագիրը Մովսես քահանան գրում և նվիրում է Ս. Սարգիս և Ս. Թեոդորոս եկեղեցիներին (Վա՛ն): Ձեռագրի կազմողը Սահակ աբեղան է: Մովսես գրիչը նշում է նաև, որ այդ թվականին Վանի մահմեդական փաշան գնում է Ղափանստուն, մեծ ավար ու գերիներ բերում: Վանեցիները ազատագրում են գերիներին և ետ ուղարկում: 1635 թ. Մովսես գրիչը պատրաստում է մի ընդարձակ և բազմաբովանդակ Ժողովածու՝ (ՄՄ, ձեռ. 5128)՝ այն ընծայելով Ներսես Մոկացուն:

Մենաստանը, անշուշտ, կարիք ուներ նաև Հայոց Տոմարը և նրա մեկնությունը բովանդակող ձեռագրի: Ավիկ անունով գրիչը տոմարական միավորներով լրացրել է Ներսես Մոկացուն պատկանող Ժողովածուն (ՄՄ, ձեռ. 7104): Ավիկը տոմարագետ է, և տոմարական բնույթի է նաև նրա ընդօրինակած և մեզ հասած ձեռագիրը, որը գրիչը եզրափակել է Ծոպատկի մասին իր բացատրությամբ (ՄՄ, ձեռ. 1971)՝ «Ապիկար և եղեռնագործ Աւիկս սակս Ծոպատկին, որ զայս քանի բանս գրեցի»⁵³: 1632 թ. գրած իր այս ձեռագրի հիշատակարանում գրիչը նշում է, որ մենաստանի վանահայրը Ստեփանոս վարդապետն է, իսկ միաբանների թիվը հասնում է 70-ի: «Գրեցաւ Տոմարս ի Լիմ անապատս, վերակացութեամբ Ստեփանոս վարդապետին, և միաբանութեամբ Հ. (70) եղբարցս, որ աստ հաւաքեալ ի հաճոյս Աստուծոյ»⁵⁴:

⁴⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, մասն Գ, կազմ.՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 250:

⁵⁰ ՄՄ, ձեռ. 4795, թ. 447ա, 517բ:

⁵¹ Նույն տեղում, էջ 299:

⁵² Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հ. Ե, կազմ.՝ Նորայր Պողարյան, Երուսաղեմ, 1971, էջ 480–482:

⁵³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, մասն Գ, էջ 478–479:

⁵⁴ Նույն տեղում:

Ավետիս երեցից պահպանվել և մեզ են հասել երկու Ավետարան: Առաջինն ընդօրինակվել է 1635 թ. (ՄՄ, ձեռ. 10697), ստացողը Հոհաննես տանուտերն է. «Գրեցաւ սբ. Աւետարանս ՚ի ծովապատ եւ յաստուածապահ մենաստան Լիմ յորջորջեալ, ի թվականիս Հայոց ՌՁԴ. (1635), ի դուռն Սուրբ Գեորգեա զաւրավարին. ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի եւ Աղթամարայ կաթողիկոսին՝ տէր Ստեփանոսին եւ առաջնորդի սուրբ ուխտիս՝ Ստեփանոս վարդապետի, վերակացութեամբ հաւրեղբարցս եւ Պետրոս արհիեպիսկոպոսին»⁵⁵: Երկրորդը գրվել է հաջորդ տարի՝ 1636 թ. (ՄՄ, ձեռ. 5637): Այս ձեռագրի գրչության ընթացքում վախճանվում է գրիչը՝ կիսատ թողնելով գործը (գրել է միայն Մատթեոսի և Մարկոսի Ավետարանները): Ստեփանոս վանահոր խնդրանքով գործը շարունակում է Կարապետ երեցը՝ Վան քաղաքի Ս. Աստվածածին և Ս. Գաբրիել հրեշտակապետ եկեղեցիներում: Հիշատակարանի վերջում նշվում է միաբանության կազմի մասին՝ «... որ են յանապատս Լիմ՝ ԲԺ. (12) կարգաւորօք և Ծ. (50) միակեցաւք...»⁵⁶: Ձեռագրում առկա է ծաղկողի չափածո հիշատակարանը. «Ստեփանոս Ջուղայեցի, Տանէն Պարսից ելա եկի, Երուսաղէմ գնացի...: Ապա եկա աստ Վան հասի, Նստեալ փութով զայս ծաղկեցի, Ոսկով պայծառ զարդարեցի, եւ յիշատակ ինձ դրեցի»⁵⁷: Ձեռագիրը պարունակում է նաև պատվիրատուի՝ Ստեփանոս վանահոր հիշատակարանը: Նա գրում է, որ մենաստանը վերահաստատելիս ցանկացել է լավ և ընտիր գաղափար օրինակից ընդօրինակված Ավետարան ունենալ: Ուստի Ավետիս գրիչը բերել է Սսի Ավետարանը, նրանից կատարել է երեք ընդօրինակում. առաջինն ուղարկել է Թացու քաղաք, երկրորդ՝ Հովհաննես տանուտերին հանձնել, երրորդ ձեռագիրն այս է, որը գրելիս տարածամ վախճանվել է. «Արդ, զայս սուրբ Աւետարանս յըստոյգ յօրինակէ ետու գրել, վասն յանապատիս հաստատութեան, ի Սըսայ յօրինակէն, զոր ընտրեաց տէր Աւետիս ծերն և գրեաց՝ Ա. (1) իւրն, որ տարան Թացու, և Ա. (1) Նորջինոյ Յովանիսին, և մինս այս ի տկարութեան ժամանակին, որ մինչ ի մեռնելոյ յօրն կու գրէր, զոր Տէր Աստուած ողորմեցի իւրն. ամէն»⁵⁸:

Ստեփանոս վանահոր պատվերով մեկ այլ Ժողովածու էլ 1641 թ. գրում է Թաթեոսը (ՄՄ, ձեռ. 4836): Ձեռագիրը բովանդակում է Ներսես Լամբրոնացու երկերը, այլ հայրերի և ուսուցիչների՝ Պատարագի ու

⁵⁵ ՄՄ, ձեռ. 10697: Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, էջ 886–887, ձեռ. 380:

⁵⁶ ՄՄ, ձեռ. 5637, թ. 304բ–6ա: Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, ձեռ. 381, էջ 887–890:

⁵⁷ ՄՄ, ձեռ. 5637, թ. 34բ:

⁵⁸ ՄՄ, ձեռ. 5637, թ. 306ա: Ավետիս երեցի ընդօրինակած առաջին ձեռագիրը կորել է:

Ժամերգությունների մեկնություններ: Այս գրչագիրը, անշուշտ, նախատեսված էր Լիմ անապատի միաբանների համար, որոնք, ձեռագրի հիշատակարաններից մեկի համաձայն, 60 անձ էին՝ «Ստեփանոս վարդապետին և եղբարց անապատիս, որ կան այժմ Կ. (60) միակէց...», իսկ մեկ այլ տեղ՝ ավելի քան 50. «ի վայելումն հոգևոր եղբարցս անապատի, որ քան զԾ. (50) հոգի ււելի կան ի փառաբանութիւն ամենասուրբ Երրորդութեանն, ի թուականութեանս Հայոց ՌՂ. (1641), ի կաթողիկոսութեան Սուրբ Էջմիածնին լուսապայծառ հոգով Փիլիպպոս սրբանունդ հայրապետին...»⁵⁹:

Լիմ անապատի միաբաններից է եղել նաև Սարգիս Եղեսացին: 1642 թ. նա գրում է մի Ժողովածու (ՄՄ, ձեռ. 45). «...ի յերկիրս Ամկոյ, ի ծովապատ Լիմս, ի հրեշտակակրօն եւ քրովբէաճեմ մենաստանս՝ ընդ հովանեաւ Սուրբ Գէորգ Զօրավարին, ի ՌՂԱ. (1642) ամին... ի յառաջնորդութեան յայս սուրբ մենարանի՝ տէր Ստեփաննոս վարդապետին, ի վայելումն ինձ՝ ամենաչար եւ եղեռնագործ ստրուկ գրչիս Սարգսի»⁶⁰: Ժողովածուն բազմաբովանդակ է. պարունակում է Վարդան Արևելցու Աշխարհացույցը, Խիկար Իմաստունի խրատները, Եվագր Պոնտացու և այլ հայրերի ճառեր ու խրատներ, Հովհաննէս Արճիշեցու Պատարագի մեկնությունը, դավանանքի բացատրություն, տաղեր և այլ նյութեր: Գրիչը խնդրում է ընթերցողներին՝ «... անմեղադիր լինել սխալանաց եւ խոշորութեան եւ մանրութեան եւ վասն լուսանցկի սակաւութեան եւ պատուով գրոյն, վասն զի յօժարութիւն կամացս եւ իղձ փափագանացս յաղթեաց եւ քարտէս ոչ ունելով բաւական՝ այսպէս ձեռնարկեցի: Ներումն եւ թողութիւն շնորհեցէք. եւ զի կար մեր այսքան էր. անմեղադիր լերուք...»⁶¹:

Սարգիս Եղեսացուց մեզ հասած հաջորդ ձեռագիրը գրվել է դրանից 30 տարի անց՝ 1672 թ.: Չենք կասկածում, որ այդ տարիների ընթացքում հմուտ գրիչը ընդօրինակել է այլ գրչագրեր ևս, սակայն դրանք մեզ չեն հասել: Այս երկրորդ Ժողովածուն (ՄՄ, ձեռ. 3069) բովանդակում է քաղվածքներ պատմագրքերից, մասնավորապես՝ Ջենոբ Գլակի, Մեսրոպ Վայոցձորեցու, Կիրակոս Վարդապետի և այլն:

1657 թ. Ղուկաս կրոնավորն ընդօրինակում է Աստվածաշնչի իմաստասիրական գրքերի մեկնություններ, նաև՝ Միխայել Ասորու Ժամանակագրությունը բովանդակող Ժողովածու (Երուսաղեմ, ձեռ. 1761)⁶²:

⁵⁹ ՄՄ, ձեռ. 4836, թ. 250բ, 348ա:

⁶⁰ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմ.՝ Օ. Եզակյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1984, էջ 173-180:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Սույն ձեռագիրը 1609 թ. գրված մեկ այլ Ժողովածուի հետ մեկ կազմի մեջ է (Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հ. 2, կազմ.՝ Ն. Պողարյան, Երուսաղեմ, 1972, էջ 102-105):

Անթվական է Հովհան գրչի ընդօրինակությունը (ՄՄ, ձեռ. 5049), որ բովանդակում է Եվագր Պոնտացու Վարքն ու մատենագրությունը: Ձեռագիրը գրվել է Հովհաննես ձգնավորի պատվերով, ով Ներսես Մոկացու հետ եկել էր Լիմ անապատ: Նրա մասին հետևյալ գեղեցիկ տողերն է թողել գրիչը. «... գհարանց հայրն եւ զգարդ անապատի զկուսակրօն եւ զհեզահոգի մաքրամիտ տէր Յովհաննէս խարազնագգեաց ձգնաւորն, որ ի տիս մանկութեան սիրեաց զվարս միակեցութեան եւ եռափափագ սիրով եկն ընդ Ներսէս վարդապետին Բեղլու կոչեցեալ ի Լմա մենաստանս թվին ՌՀԱ. (1622) եւ հաստատեցին անապատաւ, եղեն բազում կարք ձգնաւորաց արանց սրբազանից աւելի քան զԿ.(50) կուսակրօն եղբարք, որք մշտամոռնչ հառաչմամբ եւ արտօսաբար դիւօք հայցեն յԱստուծոյ զխաղաղութիւն աշխարհի եւ զփրկութիւն [հոգւոց], յորոց միջի փայլէր սա ուս[մամբ] այլ կենցաղավարութեամբ»⁶³: Սա նաև մեզ հուշում է, որ անթվական այս ձեռագիրը գրվել է 1622-ից հետո:

Մի համառոտ վկայություն ունենք, որ 1675 թ. Լիմում Ճաշոց է ընդօրինակվել «Յաւուրս առաջնորդութեան Լիմ անապատի Եղիայ վարդապետի, ՌՃԻԴ.(1675)»⁶⁴:

XVIII դարում ընդօրինակված և մեզ հայտնի ձեռագրերն ավելի սակավ են, սակայն ունեն իրենց անփոխարինելի արժեքը: Այս ձեռագրերի մեծ մասը ժողովածուներ են: Ի տարբերություն նախորդ դարերի՝ XVIII–XIX դարերում բավական շատ գրիչների ձեռագրերի ենք հանդիպում, որոնք ունեն աստվածաբանական կամ պատմական տարբեր բովանդակություններ: Հետաքրքրական է նաև, որ Լիմում XIV–XVI դարերում գրված ձեռագրերի համեմատությամբ XVIII–XIX դարերի մատյանների հիշատակարանները բավական համառոտ են, հաճախ ընդամենը մեկ նախադասությամբ նշում են գրչության վայրը, թիվը և գրչի անունը: Սա նշանակում է, որ ձեռագրերի ստեղծման նպատակը եղել է դրանք վանքում օգտագործել կրթական նպատակներով, և չեն դիտվել որպես պատմական սկզբնաղբյուրներ կամ նախատեսված չեն եղել մենաստանից դուրս որևէ ստացողի համար: Ստորև թվարկում ենք XVIII–XIX դարերում Լիմից մեզ հայտնի գրիչների անունները և նրանց ընդօրինակված ձեռագրերը:

– Հովհաննես Մոկացի. 1734 թ., ժողովածու (ՄՄ, ձեռ. 5747), գրիչը նշում է, որ «... օրինակն խիստ սղալ էր, եւ ես՝ տկար, զի յոյժ գլխացաւութիւն ունիմ, մինչ զի բազում անգամ տանի զլոյս աչացս եւ այնչափ նուազեցուցանէ զիս, մինչեւ ի յետին տկարութիւն հասուցանէ: Բայց

⁶³ ՄՄ, ձեռ. 5049, թ. 235ա:

⁶⁴ Ձեռագիրը Մեծ եղեռնի ժամանակ կորել է: Ղ. Փիրղալեմյան. Նշխարք պատմության հայոց. տե՛ս ՄՄ, ձեռ. 6332, էջ 499:

յորժամ տեսի զգիրքս, ցանկացող եղէ սմայ եւ ձեռն արկի զծագրել»⁶⁵: Գրիչը հիշում է նաև օրինակը շնորհողին և թուղթ ու գրչության գործիքներ տրամադրողին՝ «...ըզհեզահողի Յարութինն սատուածարան արքեպիսկոպոսն, որ զգաղափարն շնորհեց եւ այլ էւս բազում երախտիք ունի ի վերայ իմ... նաեւ տիրացու Պետրոսն՝ նորին աշակերտն, յիշեցցէ Քրիստոս Աստուածն մեր, զի եւ նա շնորհեաց մեզ Ա(1) դաստայ լաւ թուղթ եւ Ա(1) կարակնի եւ Ա(1) փարկալ եւ Ա(1) ճարտարփար»⁶⁶:

– Հարություն արեղա Բանտրմանցի. 1741 թ., Ժողովածու (Երուսաղեմ, ձեռ. 1729)⁶⁷ և 1744 թ., Ժողովածու (Երուսաղեմ, ձեռ. 536)⁶⁸. երկու ձեռագրերն էլ բովանդակում են տարբեր քարոզներ, մեկնություններ:

– 1743 թ. մենաստանում ընդօրինակվում է Մաշտոց (Երուսաղեմ, ձեռ. 2547)⁶⁹. ձեռագրի հիշատակարանի վերջը թափված է, ուստի՝ անհայտ է մնում գրչի անունը:

– Նիկողայոս արեղա. 1751–1752 թթ., տոմարական Ժողովածու (ՄՄ, ձեռ. 2009)⁷⁰, գրիչը հիշատակարանում նշում է, որ ինքը հմուտ չէր գրչության արվեստի մեջ, բայց 50 տարի տառապում էր սաստանայի որոգայթների դեմ, և որոշում է ձեռագիր ընդօրինակել. □Աղաչեմ անմեղադիր լերո՛ւք տկարութեան եւ սխալանաց եւ խոշորութեան գրիս եւ թղթիս, զի կարն իմ այսքան էր. որպէս օրինակն էր, այնպէս եմ գրեր, ո՛չ յաւել եւ ո՛չ պակաս□⁷¹: Նիկողայոս գրչից մեզ են հասել 1721–1755 թթ.՝ Գանձարան (ՄՄ, ձեռ. 5620), 1759/60 թթ.՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. 4982), բովանդակող Դավիթ Անհաղթի գործերն ու դրանց մեկնությունները:

– 1760-ական թվականների սկզբներին Լիմ անապատ է այցելում Կեսարիայի Ս. Կարապետ ուխտի միաբան Ղազար արեղա Շոռթեցին: Տեսնելով անապատի խեղճ վիճակը՝ նա Հակոբ վանահոր և մյուս վանականների խնդրանքով ուղևորվում է Վրաց, Աղվանից, Ռուսաց երկրները՝ հանգանակություն հավաքելու: Վեց տարի հետո վերադառնում է՝ անապատին հանձնելով իր ժողովածը: Այս ուղևորության ընթացքում Ղազար արեղային ընկերակցում է Եվդոկեցի տիրացու Ե-

⁶⁵ ՄՄ, ձեռ. 5747, թ. 252աբ:

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, կազմ.՝ Ն. Պողարյան հ. 2, Երուսաղեմ, 1972, էջ 40:

⁶⁸ Տե՛ս նույն տեղում, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 549:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, հ. Ը, Երուսաղեմ, 1977, էջ 234:

⁷⁰ Ձեռագիրը XVIII դարին պատկանող մեկ այլ ձեռագրի հետ մեկ կազմի մեջ է:

⁷¹ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. 2, էջ 1014:

դիան: Վերջինս 1768 թ. ճանապարհին՝ Հաշթարխանում (Աստրախան), Ղազար արեղայի խնդրանքով ընդօրինակում է Հակոբ Վոռոճինի «Բանք Ոսկիականք» աշխատությունը (ՄՄ, ձեռ. 305) մի լավ բնօրինակից: Ընդօրինակումն ավարտելուց հետո նա վախճանվում է: Ղազար վարդապետը 1772 թ. Լիմում գրում է ձեռագրի հիշատակարանը: Նույն ձեռագրից էլ Լիմում նա կատարում է մեկ այլ ընդօրինակություն (ՄՄ, ձեռ. 304): Թեև այս մատյանում չի նշում իր անունը, գրչության վայրը և թվականը, սակայն ակնհայտ է, որ դա Ղազար արեղայի ձեռքն է⁷²:

– Հովհաննես Բարականցի. 1762 թ., Ժողովածու (ՄՄ, ձեռ. 1834), գրիչը Հովհաննես Մոկացու աշակերտն է և իր ուսուցչի շնորհած օրինակից է ընդօրինակում ձեռագիրը, որը բովանդակում է Առաքել Սյունեցու և Հովհաննես Երզնկացու գործերը. «... զհեզահոգի Մոկացի Յովաննես աստուածաբան վարդապետն, որ նա իմ վարպետ, որ զգաղափարն շնորհեաց եւ այլ եւս բազում երախտիք ունի ի վերայ իմ»⁷³:

– Հովանես գրիչ. 1764 թ. Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապք աստուածաբանականք», այս ձեռագիրը պահվում է Պետերբուրգում և տվյալների սակավության պատճառով չենք կարող ասել, սա նո՞ւյն - Հովհաննես Բարականցին է, թե՞ այլ գրիչ⁷⁴:

– Գրիգոր գրիչ. 1770 թ. Գրիգոր Տաթևացու Մեկնությունները (ՄՄ, ձեռ. 5605), գրիչը Հովհաննես Մոկացու արժանավոր աշակերտն է և հիշատակարանում նշում է այս մասին. «... զվարպետն իմ Մոկացի Յովաննես ճգնազգեաց վարպետն, որ հանգուցեալն ի Քրիստոս»⁷⁵:

– Հարություն գրիչ. 1771 թ. Ժողովածու (ՄՄ, ձեռ. 1842). գրիչը Հովհաննես Մոկացու աշակերտներից է:

– Կիրակոս արեղա. 1771 թ., Ժողովածու (ՄՄ, ձեռ. 7183), բովանդակում է աղոթքներ, տոմարական նյութեր, քարոզներ, մեկնություններ:

– XVIII դարում անապատի միաբանների համար ընդօրինակվել է Կղեմարոսի Սանդուղք գիրքը (ՄՄ, ձեռ. 5151): Թեև գրչության հիշատակարանում նշված չէ ո՛չ գրչի, ո՛չ էլ գրչության վայրի անուն, սակայն երկու տեղ գրիչը գրում է. «Յիշատակ է գիրս ի դուռն Լմայ մեծ սուրբ անապատին», «Յիշատակ է աստուածահաճոյ մատեանս, որ Սանդուխտ գիրք կոչի, ի դուռն Լմայ մեծ սուրբ անապատին»⁷⁶: Լիմին

⁷² Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, կազմ.՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 2004, էջ 11–16:

⁷³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Զ, էջ 118:

⁷⁴ К. Юзбашьян. Православный палестинский сборник, вып. 104, с. 79 (Инст. Востоковедения, Армянский фонд, рукопись 35).

⁷⁵ ՄՄ, ձեռ. 5605, թ. 243բ:

⁷⁶ ՄՄ, ձեռ. 5151, էջ 494 (ձեռագիրն էջակալված է):

պատկանելու վերոնշյալ անմիջական արտահայտությունը, նաև այլ գրչության վայրի, անվան բացակայությունը թույլ է տալիս ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակվել է մենաստանում:

– Հակոբ վարդապետ Թովուզյանց Վանեցի (1847 թ. ստանձնել է Լիմի վանահայրությունը). 1823 թ. նա լրացրել և կազմել է դեռևս 1805 թ. Հակոբ Բաղիշեցու սկսած Ժողովածուն (ՄՄ, ձեռ. 5373)⁷⁷, 1830 թ. երկու օրինակով Լիմ անապատի համար ընդօրինակել է Պետրոս Բերդումյանի «Աղբիւր բացեալ» աշխատությունը (ՄՄ, ձեռ. 4964 և 4974): 1833 թ. նա ընդօրինակում է Հակոբ Միմոնյան Կարնեցու «Մեկնութիւն Երզոց երզոյն» աշխատությունը (ՄՄ, ձեռ. 5461), 1840 թ.՝ Հարություն Եղեսացու նույնանուն աշխատությունը (ՄՄ, ձեռ. 5449), 1841 թ.՝ Բարդուղիմեոս Մարաղացու և Պետրոս Արագոնացու երկերը (ՄՄ, ձեռ. 5375), 1845 թ.՝ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակենդոնացոյ» հայտնի գործը (ՄՄ, ձեռ. 5632): Անթվական է Հակոբ Թովուզյանի ընդօրինակած մի Քարոզգիրքը (Մր. Էջմիածին, ձեռ. 177): Նա հեղինակն է մի քանի արժեքավոր գործերի. նրան է պատկանում «Պարզաբանութիւն փոքր տրամանարանութեան Կովտնոյ» աշխատությունը, որը ուսումնագիտական ձեռնարկ է եղել անապատի միաբանների համար: Երկը մեզ է հասել 1832 թ. գրված հեղինակային գույգ ինքնագրերով (ՄՄ, ձեռ. 5369, Երուսաղեմ, ձեռ. 2063): 1863 թ. Հակոբ վարդապետը հեղինակել է «Բարոյագիտութիւն» գործը (Երուսաղեմ, ձեռ. 2778): Բավական արժեքավոր է Հակոբ վարդապետի 1870 թ. հեղինակած «Ձրօսարան» խորագրով աշխատությունը, որտեղ հեղինակը տալիս է Լիմ անապատի համառոտ պատմությունը (Երուսաղեմ, ձեռ. 2086)՝ սկսելով Ներսես Մոկացուց և հասցնելով մինչև նախորդ՝ Գաբրիել եպիսկոպոս Շիրոյան առաջնորդը:

– Հոհաննես գրիչ. 1814 թ., Պետրոս Բերդումյան, «Աղբիւր բացեալ» (ՄՄ, ձեռ. 5409), Լիմի ստացող՝ Աբրահամ վարդապետ Կոստանդնուպոլսեցի:

– Աբրահամ վարդապետ Կոստանդնուպոլսեցի. 1822 թ. Ներսես Շնորհալի, «Ողբ Եղեսիոյ» (ՄՄ, ձեռ. 5924):

– Հովակիմ վարդապետ Կարնեցին. 1823 թ., Ներսես Լամբրոնացի, «Քննութիւն կարգաց եկեղեցոյ, Խորհրդածութիւնք» (ՄՄ, ձեռ. 5377), ստացող՝ ուսուցիչը Աբրահամ վարդապետ: Նույն գրչից՝ 1823 թ., Պետրոս Բերդումյան, «Աղբիւր բացեալ» (ՄՄ, ձեռ. 5693), 1825 թ.՝ Ներսես Շնորհալի «Ողբ Եղեսիոյ» (ՄՄ, ձեռ. 5121):

– Հովհաննես արեղա Կարնեցի. 1845 թ., Գրիգոր Փեշտրմալձյան, «Տրամաբանութիւն» (ՄՄ, ձեռ. 10292), ստացող՝ Լիմի վանահայր Հա-

⁷⁷ ՄՄ, ձեռ. 5373, թ. 87ա:

կոբ վարդապետ Թովուզյան, նույն գրչից 1850 թ.՝ Պետրոս Բերդումյան, Քարոզգիրք (ՄՄ, ձեռ. 3765):

– Հակոբ մահտեսի դպիր Ղզարեցի Շամախեցույանը. 1847 թ.՝ Աղոթագիրք, (ՄՄ, ձեռ. 10170), 1847–1855 թթ.՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. 9635), 1849 թ.՝ Աղեքսանդր Գալամաթո, «Անտառ նորագոյն մտածմանց», (ՄՄ, ձեռ. 5550), 1850 թ.՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. 5749), ստացող՝ Խաչատուր ավագ սարկավագ Փշավանցի, 1851 թ.՝ Ժողովածու (ոտանավորներ, տաղեր, ողբեր և այլ նյութեր) (Երուսաղեմ, ձեռ. 3572), 1854 թ.՝ Աղեքսանդր Գալամաթո, «Անտառ նորագոյն մտածմանց» (Երուսաղեմ, ձեռ. 2952):

– 1848/9 թթ. Մխիթարյան հայրերից Ներսես վարդապետ Սարգիսյանը, այցելելով Լիմ, Կտուց անապատները և Վան քաղաքը, ընդօրինակում է Սարգիս Կունդի Ավետարանական Մեկնությունները՝ «Մեկնութիւն Ղուկասու եւ Յովհաննոս» (Վենետիկ, ձեռ. 687), Եպիփան Կիպրացու երկերը (Վենետիկ, ձեռ. 669) և Եկեղեցու հայրերի գրվածքներից այլ ընտիր երկեր՝ «Հաւաքումն բանից նախնեաց» խորագրով (Վենետիկ, ձեռ. 678):

– Երեմիա Տեր-Սարգսյանց. 1855 թ., Հակոբ Թովուզյան, «Տրամաբանութիւն» (ՄՄ, ձեռ. 5696): Նույն գրչից՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. 4172), անթվական. բովանդակում է Ներբողյան նվիրված Աստվածածնին, Լիմ անապատին ընծայված գովք և վարքաբանություն:

– Բարդուղիմեոս Տիլոյան. 1856 թ., Պետրոս Բերդումյան, «Աղբիւր բացեալ» (ՄՄ, ձեռ. 4914), իսկ 1873 թ.՝ Ժողովածու (ՄՄ, ձեռ. 5035) Հակոբ վարդապետ Թովուզյանի օրինակից. «Վերստին օրինակեալ ի սրբագրեալ յընտիր օրինակն ձեռագրութեան բազմերախտ հօրն մերոյ տեառն Յակոբայ սրբազան արքեպիսկոպոսի Թօփուզեան կոչիցելոյ վանահօր սուրբ անապատիս Լիմայ սրբոյն Գէորգայ»⁷⁸:

– Հովսեփ վարդապետ Սոլախյան. 1858 թ., Հակոբ պատրիարք Նայյան, «Մեկնութիւն բարոյական փիլիսոփայութեան» (ՄՄ, ձեռ. 4863):

– Մինաս վարդապետ. 1864 թ., Գևորգ Եվդոկացի, Քարոզգիրք (ՄՄ, ձեռ. 3341):

– Իգնատիոս արքեպիսկոպոս Վանեցի. 1867 թ., Հակոբ վարդապետ Թովուզյան, «Պարգաբանութիւն փոքր տրամանաբանութեան Կովտնոյ» (ՄՄ, ձեռ. 2645). ձեռագրում գրիչը չի նշում գրչության վայրը, սակայն կարող ենք ասել, որ Իգնատիոս արքեպիսկոպոսն այս ձեռագրի ընդօրինակման համար այցելել էր Լիմ:

– Պաղտասար վարդապետ Երևանցի. 1880 թ., Պետրոս Բերդումյան, Քարոզգիրք (ՄՄ, ձեռ. 6407): Պաղտասար վարդապետը Գևորգ

⁷⁸ ՄՄ, ձեռ. 5035, թ. 29բ:

գրչի հետ համատեղ, Քարոզգիրք (Սբ. Էջմիածին, ձեռ. 178), անթվական:

– Մատթեոս սարկավագ. 1869 թ., Քարոզգիրք (Սբ. Էջմիածին, ձեռ. 179), Պաղտասար վարդապետի պատվերով:

– Անթվական և առանց գրչության վայրի է Հովհաննես դպիրի ընդօրինակած «Կտակ աւագ ուրբաթու» խրատը (ՄՄ, ձեռ. 5477): Գրչի միակ հիշատակարանը հետևյալ երկտողն է. □Աշխատող սորայ Յոհաննես դպրիս, Ծնողաց հոգոյն ասէք ողորմիս⁷⁹: Ձեռագրի գրչության ենթադրյալ ժամանակը XIX դարն է, բացի այդ, ձեռագիրը կրում է Լիմ անապատի կնիքը և պահվել է այնտեղ ընդհուպ մինչև XX դարասկիզբը. ուստի՝ ենթադրում ենք, որ գրչագրի ստեղծման վայրը Լիմն է:

Նշենք նաև, որ Լիմը եղել է ձեռագրապահպանման խոշոր կենտրոն, ունեցել ընդարձակ ձեռագրապահոց: Իսկ սա արդեն ենթադրում է, որ հատուկ ուշադրություն է դարձվել նաև ձեռագրերի կազմմանը և պահպանմանը: Այն, որ Լիմում հատկապես XVII–XVIII դարերում զարգացած է եղել կազմարվեստը, փաստում են այնտեղ կազմված և մեզ հասած ձեռագրերը: Ա. Մալխասյանը գրում է. «ԺԸ դարում Լիմում ստեղծվում են նաև գեղարվեստական արժեք ունեցող արծաթե կրկնակազմեր, որոնք պատրաստել են վարպետ Զիրաքը (1739 թ.), Օհանեսը (1756 թ.), մահտեսի Զաքարը, մահտեսի Գրիգորը (1760 թ.) և Հովսեփ վարդապետը (1765 թ.): ...Լիմ անապատում ստեղծված արծաթե կրկնակազմերին բնորոշ է դրվագման գեղարվեստական մի ոճ, որը յուրահատուկ է իր միաստիճան բարձրությամբ, ընդհանրացումներով և զուսպ ու չափավոր զարդաքանդակներով»⁸⁰: Այս կրկնակազմերն ունեն նաև արձանագրություններ, որոնք ձեռագրերի հիշատակարանների պես տեղեկություններ են տալիս կազմող վարպետների, պատվիրատուների, կազմերի պատրաստման ժամանակի մասին: Լիմ մենաստանը իր գործունեությունը դադարեցրել է Մեծ Եղեռնի հետևանքով:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ Լիմ մենաստանից մեզ հայտնի են 102 ձեռագիր (86 պահպանված, 16 կորած): Գրչագիր ընդօրինակելու վերաբերյալ առաջին տեղեկությունը պատկանում է 884 թվականին, սակայն սա էլ միայն վկայություն է ճակատագիրն անհայտ մի մատյանի մասին: Սկսած XIV–XVI դարերից՝ արդեն պահպանվել են ամբողջական ձեռագրեր կամ գոնե դրանց նկարագրությունները՝ մեզ պատմելով մենաստանի և նրա գործունեության մա-

⁷⁹ ՄՄ, ձեռ. 5477, թ. 7ա:

⁸⁰ Ա. Մալխասյան. Վասպուրականի կազմարվեստի պատմությունից. – «Էջմիածին», 2004, -2, էջ 84–85, 88: Հեղինակ-ուսումնասիրողն առանձնացրել է թվով 7 ձեռագիր, որոնց կրկնակազմերը պատրաստվել են Լիմում XVIII դարում (ՄՄ, ձեռ. 5638, 5645, 5646, 5649, 5650, 5653, 5680):

սին: Այս դարաշրջաններից հասած ձեռագրերի նյութը թուղթն է, իսկ գիրը՝ բոլորգիրը, XVII դարում օգտագործված է նաև նոտրգիրը, իսկ ավելի ուշ՝ շղագիրը: Ձեռագրերը, ըստ բովանդակային պատկանելության, հիմնականում ավետարաններ են, սակայն ունենք նաև Աստվածաշունչ, մաշտոցներ, շարակնոցներ, գանձարաններ: Այս ձեռագրերի ընդարձակ հիշատակարանները որոշակիորեն պարզաբանում են մենաստանի պատմությունը: XVII–XIX դարերում Լիմ անապատում բավական բուռն գիտամշակութային գործունեություն է ծավալվել, որի արգասիքներից են այնտեղ գրված, ծաղկված կամ կազմված տարբեր բովանդակություններ ունեցող տասնյակ ձեռագրերը:

РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ МОНАСТЫРЯ ЛИМ

ЛУСИНЕ ТУМАНЯН

Р е з ю м е

Рукописное наследие монастыря на острове Лим Ванского озера свидетельствует о его вековых традициях. Монастырь вынужденно прекратил свою деятельность вследствие Геноцида армян и сейчас покинут. Нам известны 102 рукописи из Лимского монастыря (86 дошли до наших дней, 16 утрачены). До нас дошли цельные рукописи начиная с XIV века, но имеются также данные о переписке рукописей уже в IX веке. Эпохой возрождения монастыря считается XVII век, когда Нерсес Мокский из монастыря Святых отцов со своими единомышленниками пришел в Лим. В монастыре рукописи переписывались до конца XIX века. Это значит, что создание рукописей являлось одним из важных занятий лимских монахов.

THE SCRIPTORIUM HERITAGE OF LIM MONASTERY

LUSINE TUMANYAN

S u m m a r y

The scriptorium heritage of Lim Monastery on Lake Van testifies of its secular traditions. The monastery had to stop functioning because of the Genocide of Armenians, and now it is abandoned. We know 102 manuscripts from Lim Monastery (86 of them are extant, 16 are lost). Complete manuscripts from Lim Monastery, starting from the 14th century have come down to our days, but we also have information about the scribing art in the 9th century. The 17th century is considered to be the renaissance period for the Monastery, when Merses Mokatsi from the Harants Monastery came to Lim with his adherents. Manuscripts were produced in this monastery till the 19th century. This means that manuscript production was one of the important occupations of the Lim monks.